

ՌԻՍԿԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Մարդկային հասարակության զարգացման բոլոր շրջաններում և տնտեսական գործունեության բոլոր համակարգերում որպես գլխավոր խնդիր եղել է և մնում է մարդկանց պահանջմունքների բավարարումը: Այդ խնդրի լուծումը մշտապես օրգանական կապի մեջ է գտնվել հասարակության տնօրինության տակ գտնվող ռեսուրսների ու հնարավորությունների առկա քանակի հետ: Որպես կանոն, վերջիններս սահմանափակ են, որի պատճառով էլ ընդհանուր պահանջմունքները լրիվ չափով երբեք էլ չեն բավարարվել և չեն բավարարվում: Այդ հանգամանքը օբյեկտիվորեն հասարակությանը և նրա առանձին անդամներին դրդել է շարունակ մտածել սահմանափակ ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման ուղիներ փնտրել, որն էլ հիմք է դարձել այլընտրանքային տեսություն ստեղծելու համար: Այսօր այդ հիմնախնդրի առավել ընդունելի տեսական ընդհանրացումը Վ. Պարետտոյի կողմից առաջարկած տնտեսական արդյունավետության սահմանումն է, ըստ որի սահմանափակ ռեսուրսները տնտեսության մեջ բաշխված են այնպես, որի դեպքում միաժամանակ չի կարելի ավելացնել որևէ բարիքի արտադրությունը առանց կրճատելու մի այլ բարիքի արտադրության չափերը: Այսօր այդ սահմանումը համարվում է դասական:

Պահանջմունքների բավարարումը, սահմանափակ ռեսուրսների այլ-ընտրանքային օգտագործման հնարավոր տարբերակները որոշում են մարդիկ, ֆիրմաները և այդ խնդիրը ընկած է նրանց տնտեսական վարքագծի հիմքում: Ցանկացած տարբերակ դեռևս մնում է տարբերակ մինչև դրա գործնական կիրառումը և հնարավոր արդյունքների ստանալը, որը և առաջացնում է ռիսկի դիմելու անհրաժեշտություն: Այսպիսով, ռիսկը, բազմաթիվ այլ գործոնների հետ մեկտեղ, ազդում է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և հասարակության տնտեսական քաղաքականության ամենակարևոր նպատակ-

մերից մեկի՝ պահանջմունքների բավարարման և կենսամակարդակի բարձրացման իրականացման վրա:

Խորհրդային տնտեսագիտությունը, ելնելով տնտեսության վարչա-իրամայական մոդելի առանձնահատկություններից, բացառում էր տնտեսական կյանքում ռիսկի առկայությունը: Դեռ ավելին, այն համարում էր զուտ սուբյեկտիվ կատեգորիա, որը պլանային տնտեսական համակարգում, որտեղ ձեռնարկատիրական գործունեության բոլոր ոլորտներում նախապես հայտնի էր թե ծախսերը, թե արդյունքը, թե արտադրանքի տեսականին և դրա սպառողը, ապա ռիսկի համար չկար ոչ մի օբյեկտիվ հիմք կամ էլ դա շատ աննշան է¹: Ռիսկի, և դրա նման շատ հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ, սպառողական վարքագիծը իր բոլոր բաղադրիչներով՝ սահմանային օգտակարությունը, ռացիոնալ սպասումները, սպառողական նախընտրությունը և մյուսները, լուրջ հետազոտության չէին ենթարկվում և դա անշուշտ արգելակում էր տնտեսագիտության տեսության ընդհանուր զարգացման գործընթացը նախկին Խորհրդային միությունում: Անաչառ լինելու մտադրությամբ ցանկանում ենք ընդգծել, որ մինչև 20-րդ դարի 30-ական թվականները Խորհրդային միությունում, կապված Նոր տնտեսական քաղաքականության իրականացման հետ, ընդունվում էր ռիսկի դերը տնտեսական կյանքում, նույնիսկ այն համարվում էր տնտեսական գործունեության աշխուժացման գործոն: Դրանից հետո երկար ժամանակ այն զրկվեց ուշադրությունից և միայն 90-ական թվականներին լույս տեսան մի շարք հրապարակումներ ռիսկի հիմնախնդրի շուրջը, որտեղ նույնպես ընդգծվում էր, որ ռիսկը որպես տնտեսական կատեգորիա անհիմն կերպով անտեսվում էր տնտեսագիտական գրականության մեջ, կամ էլ քննարկվում էր նեղ և նեգատիվ տեսանկյունով: Հիմնական ուշադրությունը այդ քննարկումներում դարձվում էր ռիսկի կիրառական խնդիրներին, մասնավորապես արտաքին առևտրական, վարկային և այլ գործարքների կնքման ժամանակ առաջացող ռիսկին: Որոշ հեղինակներ էլ ընդգծում էին տնտեսական ռիսկի

¹ Шанин Т. Формы хозяйства вне систем, Вопросы философии, М. 1990, №8, стр. 111.

զնահատման մեթոդների և մոտեցումների տարբերությունները սոցիալիստական և կապիտալիստական տնտեսակարգերում: Դրանք պայմանավորելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության տարբեր շարժառիթներով, մի դեպքում դա պլանի կատարումն էր, մյուս դեպքում առավելագույն շահույթի ստացումը²:

Արևմտյան տնտեսագիտությունը, ազատ լինելով նախապաշարումներից, վաղուց զբաղվում էր, այսպես կոչված, «մաքուր» սուբյեկտիվ հասկացությունների լուրջ հետազոտությամբ: Բավական է ասել, որ 1980 թվականից հետո Նոբելյան մրցանակի արժանացած տնտեսագետներից ամորոշության և դրա հետ կապված ռիսկի հարցեր քննարկել են Ջ. Թոբին (Նոբելյան մրցանակ 1981թ.), Մ. Ալլենը (1988), Գ. Մարկովիցը, Մ. Սիլբերը և Ու. Շարպը (1990):

XX դարի վերջերից սկսած հետսոցիալիստական երկրներում տնտեսագետները աշխատում են լրացնել «սուբյեկտիվ» բնույթ ունեցող տնտեսական կատեգորիաների քննարկման ասպարեզում եղած բացը, որի մասնակի վկայություններից է նաև ռիսկի տնտեսագիտական հիմնախնդիրների միջոցով գիտական աշխատությունների բավական մեծ ծավալը:

Տնտեսագիտությունը ռիսկի հիմնախնդրի քննարկման ժամանակ փորձում է պարզել, թե ի՞նչ տեղ է զբաղեցնում ռիսկը հասարակության տնտեսական կյանքում, ռիսկի հիմնախնդրի հետ կապված ո՞ր ասպեկտներն են արժանի տնտեսագետների առավել մանրազնին ուշադրությանը և ինչու՞:

Հասարակության տնտեսական կյանքում ռիսկի տեղի և դերի հարցը քննարկելիս մենք ցանկանում ենք ընդգծել, որ նկատի ունենք ոչ թե ռիսկը ընդհանրապես, այլ հատկապես տնտեսական ռիսկը: Չմայած տնտեսական ռիսկ հասկացությունը արեստրակտ բովանդակություն ունի, քանի որ այն իրոք բնության մեջ, հասարակության տնտեսական կյանքում օբյեկտիվորեն գոյություն չունի, այսինքն այն կախված է մարդու գիտակցությունից, դրա արգասիքն է, բայց և այնպես ռիսկի առկայությունը կոախում է ամեն մի անհատ,

² Ускорение и наука в Сибири: Материалы круглого стола, ж. "Коммунист", 1987, N17 стр. 63.

իսկ նրանք, ովքեր զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, առավել ևս ընկալում են դրա տնտեսական բովանդակությունը, էությունը:

Հասարակության տնտեսական կյանքում ռիսկի դերը որոշվում է նրանով, որ մարդիկ, ունենալով տնտեսական գործունեության ծախսողում, ապագայում աշխատում են խուսափել և նորից չընկնել նման տնտեսական իրավիճակի մեջ: Եվ հակառակը, ովքեր ունենում են հաջողություններ, և այն էլ խիստ շոշափելի, նրանք նորից դիմում են համապատասխան գործունեության:

Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացման, շուկայական գործընթացների ծավալման արդյունքում ռիսկի գործոնը սկսում է մեծ նշանակություն ստանալ նաև տնտեսական կյանքի ֆինանսական ոլորտում: Այսպես, իրենց խնայողությունները, որպես բանկային ավանդ, կորցրած ավանդատուները, որը հատկապես բնորոշ էր նաև մեր հանրապետության ավանդատուներին, ապագայում զերծ են մնում բանկերի հետ համագործակցությունից: Նման դատողությամբ, շատ բանկեր, որոնց վարկային ծրագրերը մատնվել են անհաջողության, դրսևորում են զգուշ վարքագիծ ապագա կամ նոր ինվեստիցիոն ծրագրերի նկատմամբ՝ նոր վնասներից խուսափելու նպատակով:

Ահա այսպիսի իրավիճակները արդեն օբյեկտիվ բնույթ ունեն, կախված չեն մարդկանց կամքից և ռիսկ հասկացությունը տնտեսական կյանքի անքակտելի ատրիբուտներից է, հետևաբար կան բոլոր հիմքերը ռիսկը դիտել որպես տնտեսական հասկացություն և այն դարձնել տնտեսագիտության հետազոտության առարկա:

Մյուս հարցը, որը ցանկանում ենք ընդգծել այն է, թե տնտեսագետները ռիսկի հիմնախնդիրը ի՞նչ տեսանկյունով են քննարկում, ի՞նչն է առավել չափով նրանց հետաքրքրում և ինչու: Այս հարցը շատ սերտորեն կապված է նախորդ հարցի հետ և, անշուշտ, հանդիսանում է դրա տրամաբանական շարունակությունը: Գտնում ենք, որ այս առումով կարելի է ձևակերպել քննարկման հետևյալ մոտեցումները:

Ռիսկի օբյեկտիվ գնահատումը և դրա նվազեցման (և ոչ թե վերացման) մեթոդները, որոնք գլխավորապես ունեն նորմատիվային վերլուծության ուղղվածություն:

- քննարկել ռիսկի սուբյեկտիվ ընկալման առանձնահատկությունները և դրանք բնութագրող գործոնները, որը պոզիտիվային վերլուծության ուղղվածություն ունի:

Ռիսկի հիմնախնդրի նորմատիվային քննարկումով վաղուց զբաղվում են արտասահմանում և այդ հարցը այսօր էլ գրավում է բազմաթիվ տնտեսագետներին:

Ռիսկի օբյեկտիվ գնահատման, դրա չափերի նվազման մեթոդների հարցը տնտեսագիտական գրականության մեջ պարզաբանված է բավական բարձր մակարդակով: Իսկ ինչ վերաբերում է ռիսկի սուբյեկտիվ ընկալմանը և դրա վրա ազդող գործոններին, դեռ այնքան էլ չեն հետազոտված, կան «սպիտակ» էջեր: Մենք հակված ենք մտածել, որ այդ բնագավառում հետազոտությունները և վերլուծությունները կարող են օգնել տնտեսագիտության տեսությանը՝ բացահայտելու լրացուցիչ հնարավորությունները տնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Այդպիսի եզրահանգման համար հիմք է ծառայում այն փաստը, որ հասարակության տնտեսական կյանքին մասնակցող ամեն մի անհատ, թեկուզ սուբյեկտիվորեն, գիտակցում է ռիսկի անխուսափելիությունը և դրա հաշվարկման անհրաժեշտությունը: Բացի այդ, ռիսկի սուբյեկտիվ գնահատման միջոցով է որոշվում տնտեսական համագործակցության յուրաքանչյուր մասնակցի վարքագիծը, որը դրսևորվում է տնտեսական ակտիվության աստիճանի տեսքով, լուծվում է նաև նախապատվությունների հարցը և այլն:

Ռիսկը տնտեսական կյանքում ամեն մի անհատի դրդում է ընդունել իր՝ սուբյեկտիվ որոշումը, որից հետո իրական գործունեության ընթացքում տեղի է ունենում առանձին սուբյեկտների ընդունած որոշումների բախում և նոր արդեն պարզ է դառնում, թե ինչ արդյունավետությամբ են օգտագործվում սահմանափակ ռեսուրսները և հնարավորությունները: Այս դեպքում կարևորվում է ռիսկի պայմանների, ձևերի, կառուցվածքի հետազոտությունը, որոնք էական ազդեցություն են ունենում ռիսկային իրավիճակների ընտրության ժամանակ: Սրանք խնդիրներ են, որոնք լուրջ փաստարկ են դառնում ռիսկի սուբյեկտիվ ընկալման տնտեսագիտական հետազոտության

անհրաժեշտությունը հիմնավորելու իմաստով և մեծ չափով օգտակար են տնտեսական քաղաքականության մպատակների մախապատվության որոշման դեպքում:

«Ռիսկ» հասկացությունը քննարկում են հասարակական ու բնական բազմաթիվ գիտություններ, որը շատ հասկանալի ու տրամաբանական է, քանի որ ռիսկը բազմադեմք է ու բազմաբովանդակ: Յուրաքանչյուր գիտություն ռիսկի քննարկման ժամանակ ունի իր մպատակը և հետազոտման համապատասխան մեթոդները: Այսպես, ռիսկը քննարկում են փիլիսոփայությունը, հոգեբանությունը, տնտեսագիտությունը, իրավաբանությունը, բժշկագիտությունը, կենսաբանությունը և այլն, որը վկայում է, թե, իրոք, ռիսկը բազմադեմք է:

«Ռիսկ» տերմինի բացատրական մեկնաբանությունը տալիս են գրեթե բոլոր բառարանները: Օրինակ, Վ. Ղալի բացատրական բառարանում ռիսկը մեկնաբանվում է որպես «գործողություն՝ հաջողության հույսով», «մեկ էլ տեսար՝ ստացվեց» մտայնությամբ³, Ա. Օժեգովի բառարանում ռիսկը բացատրվում է որպես մարդու պատկերացում հնարավոր վտանգի և կորուստի վերաբերյալ, որպես հաջող ավարտ խոստացող գործունեություն⁴: Էդ. Աղայանը ռիսկը բնութագրում է որպես որևէ բանի հնարավոր վտանգ, հենց այնպես սկսած, բախտին ապավինած գործ, գործունեություն, հնարավոր վտանգը արհամարելու խիզախություն, հանդգնություն⁵: Ա. Ղարիբյանը ռիսկը բացատրում է որպես հնարավոր վտանգ, խիզախում⁶:

Այս թվարկումը կարելի է շարունակել, սակայն սահմանափակվելով թվածներով, մշեմք, որ որպես ռիսկի հատկանիշ, բնորոշ գծեր, ընդգծվում են անորոշությունը, վտանգի առկայությունը, խիզախումը, հանդգնությունը և մշված որակները միանշանակ վերագրվում են գործ, գործունեություն ձեռնարկելու հանգամանքին: Իհարկե, գործունեության ոչ բոլոր ձևերի վերջնական արդյունքը կարող է նյութականանալ, առարկայական կամ

³ Даль В. Толковый словарь. С-П, М., 1982, стр. 96

⁴ Ожегов С. И., Словарь русского языка, М. 1997г, стр. 672

⁵ Աղայան Էդ., Արդի հայերենի քաղաքական բառարան, Ե., 1976թ., էջ 1263:

⁶ Ղարիբյան Ա., Ռուս-հայերեն բառարան, Եր. 1968, էջ 1043:

դրամական տեսք ստանալ, սակայն վտանգը, վնասը, կորուստը, այս կամ այն ձևով, միշտ էլ առկա կլինի:

Ռիսկի վերը նշված, համահասարակական հնչեղությունն ստացած բացատրություններում, ցանկանում ենք մասնավորապես ուշադրություն դարձնել և առանձնացնել ռիսկը բնութագրող այնպիսի որակական հատկանիշի վրա, ինչպիսին է «խիզախումը», «հանդգնությունը», որը ենթադրում է գործարար մարդու այնպիսի վարքագիծ, երբ գործունեությունն սկսում են նույնիսկ վտանգի առկայության գիտակցման պայմաններում: Դա առավել մեծ չափով վերաբերվում է տնտեսական, արտադրական, ֆինանսական գործարքներին:

Ռիսկի տնտեսական դրսևորումը կամ տնտեսական ռիսկը մյուս դրսևորումներից տարբերվում է ամենից առաջ նրանով, որ այն ի վերջո նյութականանում է՝ կամ հնարավոր օգուտների կամ էլ կորուստների տեսքով: Դրա համար հիմք հանդիսանում է տնտեսավարող սուբյեկտի կողմից տնտեսական, կազմակերպչական, տեխնիկական որոշումներ ընդունելը, ինչպես նաև անկանխելի, անհաղթահարելի հանգամանքները, ինչպես օրինակ, բնական միջավայրը, աշխարհագրական դիրքը՝ երկրաշարժի, ջրհեղեղի հնարավորությունը և այլն: Այս վերջիններիս անվանում են ֆորս-մաժորային:

Տնտեսական ռիսկի հիմնախնդիրը, այն պայմանավորող հանգամանքները տնտեսագիտական գրականության մեջ քննարկվում են վաղուց: Այսպես, Ադամ Սմիթը գրում է, որ հաճախ նույնիսկ շատ դժվար է սահմանել շահույթի միջին մեծությունը նույնիսկ առանձին վերցրած որոշակի վայրում և որոշակի ժամանակահատվածում, քանի որ դրա վրա ազդում են ոչ միայն զենքերը, այլև, նույնիսկ հազարավոր, այլ պատահականություններ, որոնք շահույթի չափերը կարող են փոխել ոչ միայն տարեցտարի, այլ օր-օրի, նույնիսկ ժամ- ժամի⁷: Շարունակելով իր դիտողությունները, Ադ. Սմիթը նշում է, որ համարձակ, արկածախնդիր գործամուլ անձը (ավանտյուրիստը) երբեմն կարող է ձեռք բերել շատ նշանակալից կարողություն, ունեցվածք՝ երկու- երեք հաջողակ սպեկուլյատիվ գործարքներից, բայց ճիշտ նույն

⁷ Смит, А. Исследование о природе и причинах богатства народов, М. 1935, стр. 80

հավանականությամբ նա կարող է կորցնել մի ամբողջ կարողություն երկու-երեք անհաջող գործարքներից⁸։ Ա.Սմիթը իր այդ հետևությունը հիմնավորում է բազմաթիվ այլ դիտողություններով⁹։

Այսպիսով, հիշյալ դատողություններում առանց «ռիսկ» տերմինը օգտագործելու, Ադ. Սմիթը նկարագրում է տնտեսական այնպիսի իրավիճակներ, որոնք, ինչպես ինքն է ընդգծում, ենթակա են հազարավոր չնախատեսված գործոնների ազդեցությունը, որոնց առաջին, աչքի ընկնող հատկանիշը պատահականությունն է։ Իհարկե, իր հանճարեղ գրքի մյուս բաժիններում, Ադ. Սմիթը օգտագործում է «ռիսկ» տերմինը, կապված փոխատվական կապիտալի, շահույթի ստացման եղանակների և կապիտալի կիրառման այլ ոլորտների հետ։

Նոր դասական տնտեսագիտության ականավոր ներկայացուցիչ Ալֆրեդ Մարշալը ռիսկի հիմնախնդրին վերաբերվող տեսական հետազոտությունների ժամանակ ելակետ է վերցնում հետևյալ դրույթները.

• ձեռնարկությունը (նույնն է թե ձեռնարկատերը) գործում է անորոշության պայմաններում, հետևաբար պետք է ղեկավարվի անկեղծորդ, սպասվելիք շահույթի չափերով, ինչպես նաև նկատի ունենա դրա շեղման հնարավոր մեծությունը.

• ձեռնարկուն իր վարքագիծը հիմնականում պայմանավորում է սահմանային օգտակարության հայեցակետով, այսինքն, նախապատվությունը տրվում է կապիտալի ներդրման այն տարբերակին, որի դեպքում կարելի է

⁸ Ադ. Սմիթը հավանաբար նկատի ունի XVII դարի արկածախնդիր-ֆինանսիստ, իր հայրենակից Ջոն Լոուին (1671-1729), որը Ֆրանսիայում հիմնեց մասնավոր «Համընդհանուր բանկ» և մի քանի հաջող սպեկուլյատիվ գործարքներից հետո դարձավ Ֆրանսիայի ամբողջ ֆինանսների տիրակալ և մի քանի տարի հետո մի շարք անհաջող գործարքներից հետո կորցրեց ամեն ինչ և ստիպված էր դիմել փախուստի՝ ավանդատուների վրեժխնդրությունից փրկվելու համար։

⁹ Смит. А. Исследование о природе и причинах богатства народов, М. 1935, стр. 49, 104, 121, 130 и т.д.

ստանալ ենթադրվող կամ սպասվող շահույթը, իսկ շեղումները պետք է լինեն նվազագույն՝ պակասի դեպքում¹⁰:

Ալֆ. Մարշալը իր այս դրույթներում հատկապես առանձնացնում է անորոշությունը, կորուստի հնարավորությունը՝ որպես ռիսկի կարևոր հատկանիշներ և կարծես թե հիմնավորում է «ռիսկի թշնամիների» դիրքորոշումը, այսինքն, այն մարդկանց վարքագիծը, ովքեր գտնում են, թե մասնակցությունը կասկածելի, մոլի խաղերին, վիճակախաղերին, զրազներին և այլն, բոլորովին էլ չահավետ չէ¹¹:

Ջ. Ս. Քեյնսը, ի տարբերություն Ալֆ. Մարշալի, ուշադրություն է դարձնում ձեռնարկուների այնպիսի մի հակումի վրա, ինչպիսին է՝ հանուն սպասվելիք մեծ շահույթի ստացման մեծ ռիսկի դիմելը: Նա հիմնավորում է նաև «ռիսկի ծախսեր» հասկացությունը: Ջ. Քեյնսի կարծիքով, երբ ձեռնարկուն չի ստանում ակնկալվող շահույթը, ապա դրա փոխհատուցման համար նա պետք է ունենա որոշակի միջոցներ, որն էլ հենց կկազմի «ռիսկի ծախսերը»: Դա պետք է հասկանալ այսպես, որ ռիսկային գործարքից սպասվող շահույթը նախատեսված է օգտագործել որոշակի նպատակներով, որոնք երբեմն բավական կարևոր ու անհրաժեշտ են, իսկ եթե ռիսկը իրեն չի արդարացրել և ծախսերը բոլոր դեպքերում պետք է կատարել, ապա նախապես դա հաշվի է առնվում: Ջ. Քեյնսը առանձնացնում է նաև ռիսկի տեսակները և նշում, որ տնտեսական կյանքում դրանք անհրաժեշտ է նկատի ունենալ¹²:

Ժամանակակից շատ տնտեսագետներ հետազոտում են այն հարցը, թե ինչ ազդեցություն է թողնում անորոշությունը մարդկանց վարքագծի վրա և զալիս են այն հետևության, որ, ըստ սկզբունքի, մարդիկ չեն սիրում դիմել ռիսկի և պատրաստ են նույնիսկ վճարել ռիսկի հնարավորությունից խուսափելու համար, օրինակ, ապահովագրությունը: Իհարկե, դա բնորոշ

¹⁰ Маршалл А. Принципы экономической науки, М. 1993, Т. 1, стр. 377-389, Т. 2, стр. 287-303, Т. 3, стр. 22-23

¹¹ Stuu' Инвестиционно-финансовый портфель: книга инвестиционного менеджера, книга финансового менеджера. П/п Рубин Ю. Б. Солдаткин В. И. М. 1993г., стр. 15-16.

¹² Кейнс Д. М. Общая теория занятости, процента и денег. М. 1978, стр. 124-125, 208-210 и др.

վարքագիծ է հասարակության ոչ բոլոր անդամների համար և նրանցից շատերը, հատկապես տնտեսական ակտիվ գործունեություն իրականացնողները, գործ ունեն ռիսկի հետ և ուրեմն, առաջանում է երկրորդ հարցը ի՞նչ ձևով է բաշխվում ռիսկի դիմելու հակումը շուկայական տնտեսության մեջ: Այս հարցի պատասխանը կարելի է տալ շուկաների տարբեր տեսակների գործունեության մեխանիզմների քննարկման հիման վրա:

Կատարյալ և ոչ կատարյալ մրցակցության շուկաներում ռիսկի դրսևորումը հենվում է գործարար սուբյեկտների արդյունավետ սպասումների տեսության դրույթների վրա: Դրա էությունը այն է, որ որոշումներ ընդունելիս մարդիկ հենվում են հարաբերական համեմատության սկզբունքի վրա: Նրանց հայտնի տարբերակների բաղադրիչները հաջորդաբար համեմատվում են կամ ամմիջապես իրար հետ կամ էլ մինչ այդ հայտնի արտաքին հաշվարկի արդյունքների հետ: Բոլոր դեպքերում գործարար մարդիկ խնդիրը լուծում են հետևյալ վարքագծի օգտին՝ ոչ թե խուսափել ռիսկից, այլ աշխատել այն կանխատեսել՝ ձգտելով ռիսկը հասցնել հնարավոր առավել ցածր մակարդակի:

Մեր հանրապետության ժամանակակից տնտեսական իրավիճակին բնորոշ առանձնահատկությունները ամփոփ տեսքով հանգում են նրան, որ նախորդ համակարգից ժառանգած արտադրական բազան քայքայվեց և դարձավ անօգտագործելի շատ ավելի արագ, քան ստեղծվեց շուկայական պահանջներին բավարարող նոր բազա: Արդյունքում գործազրկությունը աճեց, կրճատվեցին գործատեղերը և այլն:

Նման պայմաններում պետությունն էլ, բնական է, որ ի վիճակի չէ ապահովել տանելի զբաղվածություն և ժողովրդի բարեկեցիկ մակարդակ: Կարծում ենք, որ այդ վիճակից դուրս գալու արդյունավետ ելքերից մեկն էլ ձեռնարկատիրական գործունեություն սկսել ցանկացող և արդեն գործող տնտեսավարող սուբյեկտների ընդունակությունների առավելագույն օգտագործման հնարավոր պայմանների ստեղծումն է, որտեղ կարևոր է ռիսկի գործոնի հաշվառումը և կառավարումը: